community

The New Apostolic Church around the world

03/2020 AM

Միայն արիություն: Ամեն ինչ լավ կլինի

Խմբագրական
Վստահել

Ժամերգություն
Տերը մեծ բաներ է անում մեզ համար

Եկեղեցական ուսմունք
Գործել Սուրբ գրքի համաձայն

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Ուրախության և տառապանքի ժամանակ՝ վստահել

Ժամերգություն

4 Տերը մեծ բաներ է անում մեզ համար

Մանկական անկյուն

10 Գանձապետը Եթովպիայից
12 Այցելություն Անյային՝ Սանկտ Պետերբուրգից / Ռուսաստան/

Տեսություն

14 Ուսմունք և կյանք - Գործել Սուրբ գրքի համաձայն

Ընդհանուր լուրեր

18 Գլխավոր առաքյալ: Միայն արիություն - ամեն ինչ լավ կլինի

■ Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Ֆրանկ Շուլդթի
■ Հակառակ երեսի լուսանկարը՝ Ֆրանկ Շուլդթի

Ուրախության և տառապանքի ժամանակ՝ վստահել՝

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր,

դժվար իրավիճակներում, երբ դրանք ցանկանում են մեզ անլուծելի խնդիրների առաջ կանգնեցնել, մարդը կանչում է ամենազոր Աստծուն: ,, Տեր, օգնիր,,- այսպես է հնչում աղոթքը անհանգիստ ժամանակներում:

Ես մտաբերում եմ աստվածաշնչյան մի տեքստ, որը շատ ասելիք ունի՝ ,, Տերը վիճելու է ձեզ համար և դուք խաղաղվելու եք,,- այսպես է գրված Մովսեսի 2-րդ գրքի 24,14-ում: Այդ ժամանակ խոսքը գնում էր այն զարտուղի ճանապարհի մասին, որով պետք է Իսրայելի ժողովուրդը անապատով անցներ: Նրանց առջևում անհաղթահարելի խոչընդոտներ էին, իսկ հետևում՝ զայրացած փարավոնի եգիպտական զորքը: Իսրայելացիներն ընկնում են տագնապի մեջ և աղաղակում Աստծու դեմ: Մովսեսն ասում էր նրանց, թե ինչ պետք է արվեր.,, Վստահեք Աստծուն, խաղաղվեք, նա մեր կողքին է, մեզ հետ ոչինչ չի կարող պատահել,,: Եվ, ինչպես մենք տեղեկանում ենք այս պատմությունից, Տերն իսկապես անսպասելի ու ազդեցիկ ձևով հասնում է և փրկում իր ժողովրդին:

Մենք էլ կարող ենք դժվար իրավիճակներում կողմնորոշվել: Այդ ժամանակ Սուրբ Հոգին մեզ կոչ է անում տագնապի մեջ չընկնել կամ մեր թշվառության համար Աստծուն չմեղադրել: Նա մեզ հիշեցնում է այն մասին, որ Աստված մեզ փրկում է՝ շուտով նա աննախադեպ ձևով փրկելու է մեզ այնպես, որ ուղարկելու է իր Որդուն, որպեսզի նա մեզ իր հետ տանի: Հիսուսն իր առաքյալների հետ հոգալու է այն բանի համար, որ նրա հարսնացուական համայնքը պատրաստ լինի իր գալստյան ժամանակ: Ուստի՝ եկեք փորձության պահին խաղաղ մնանք, Աստծուն վստահենք և աղոթքով նախապատրաստվենք մեր համբարձման մեծ պահին:

Մենք նորից կապրենք այն ժամանակները, երբ ամեն ինչ լավ կլինի: Այդ ժամանակ կգանք դեպի Աստված՝ գովաբանելու և փառաբանելու նրան, քանի որ մենք գիտենք, որ բարության համար պարտական ենք նրա ողորմածությանը: Մենք ճաշակում ենք ուրախությունն ու երջանկությունը, որը Աստված նվիրում է մեզ: Եվ մեր կյանքի այդ լավ պահերին մենք պետք է աղոթքով նախապատրաստվենք Քրիստոսի գալստյանը և չմոռանանք, որ Աստված շատ ավելի գեղեցիկ բան է մեզ նվիրելու, այն է՝ իր հետ հավիտենական միասնությունը:

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Տերը մեծ բաներ գործեց մեզ համար

2019-ի հոկտեմբեր / նոյեմբեր ամիսներին գլխավոր առաքյալ Շնայդերը դեպի Հարավ-Արևելյան Ասիա կատարած ճանապարհորդության ընթացքում տոնեց երեք ժամերգություն և անցկացրեց բազմաթիվ ժողովներ: 2019-ի 10 -րդ ամսվա 27 -ին նա ժամերգություն անցկացրեց Կուալա Լումպուրի / Մալայզիա/ քույր-եղբայրների մասնակցությամբ

Լուսանկարները՝ Հարավ-Արևելյան Ասիայի ՆԱԵ

Սաղմոս 126;3,4

Տերը մեծ բաներ գործեց մեզ համար և մենք ցնծացինք: Տե՛ր, ՝ետ դարձրու մեր գերությունը՝ հարավի հեղեղների պես:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես շնորհակալ եմ երկնային Հորը ձեզ հետ լինել կարողանալու համար: Դա ինձ օգնում է իմանալ, թե ինչ հարուստ եմ ես, քանի որ ես նաև այստեղ՝ Մալայզիայում, ունեմ շատ հավատացյալ եղբայրներ և քույրեր:

Այս օրը ինձ հնարավորություն է ընձեռնել դեմ առ դեմ ձեզ հայտնելու իմ շնորհակալությունն ու ակնածանքը: Ես մեծ ակնածանք ունեմ այն բանի համար, որ դուք այս դժվար հարաբերություններում կենդանի եք պահում ձեր հավատը: Ես մեծ ակնածանք ունեմ ձեր ծառայության, ձեր զոհաբերության և Տիրոջ հանդեպ ձեր սիրո համար: Սա քաղաքավարությունից բխող խոսք չէ, այլ՝ ես իսկապես այդպես եմ կարծում: Ինձ համար միշտ գեղեցիկ է եղբայրների ու քույրերի հետ հանդիպելը, քանի որ ես նրանցից շատ բան եմ սովորում: Շնորհակալ եմ, որ դուք այնպիսինք եք, ինչպիսին որ կաք:

Մենք լսեցինք մի խոսք 126-րդ սաղմոսից, որը պատկանում է ծանոթ սաղմոսներին՝ անկախ այն բանից, որ այն տարբեր ձևերով է թարգմանված: Անգլիական և ֆրանսիական տարբերակներում տեղեկացվում է, որ սաղմոսագիրը խոսում է բաբելոնական գերությունից ազատվելու ժամանակների մասին: Գերմանական տեքստը խոսում է ապագայի մասին: Սակայն, բովանդակային առումով՝ խոսքը նույն բանի մասին է: Խոսքը կապ ունի գերություն ժամանակների հետ: Շատ երկար տարիներ հրեա ժողովուրդը ապրել է բաբելոնյան գերության մեջ, մինչև Աստված նրան նորից ազատություն նվիրեց և հնարավոր դարձրեց Երուսաղեմ վերադարձը:

Նախ Երուսաղեմ վերադարձավ միայն մի մասը: Իհարկե, մարդիկ երջանիկ էին և գովաբանում էին Աստծուն, ով իրենց համար մեծ բաներ է արել և ազատել է թշնամուց: Դա խոստովանում էին նաև ուրիշները՝ հարևան ժողովուրդները, ովքեր ևս ասում էին՝ ,, Տերը մեծ գործեր է արել նրանց համար,, / Սաղմոս 126,2/: Սա է պատմությունը:

Իսկ հիմա եկեք նայենք մեզ և մեր ժամանակներին: Մենք էլ առիթ ունենք ասելու՝,, Տերը մեծ բաներ գործեց մեզ համար,,: Նա մեզ համար մեծ բաներ է արել Հիսուս Քրիստոսի միջոցով: Աստծո Որդին թողել է երկնային փառահեղությունը և եկել երկիր: Նա որոշել է մարդանալ և որպես մարդ ապրել մարդկանց մեջ:Նա հաղթել է մահին: Ուրիշ ոչ մեկը չի կարող դա անել: Դրանով նա մեզ փրկել է չարից: Մի անհամեմատելի հաղթանակ: Ոչ ոք չէր կարող դա անել: Նա միակն է, որն ի վիճակի էր դա անել: Նա մեզ համար հասավ հաղթանակի չարի դեմ: Նա ստիպված չէր դա անել իր համար, նա դա արեց մեզ համար: Նա զոհաբերեց իր կյանքը մեզ համար: Դա սիրո ամենամեծ ապացույցն է, որ կարելի է մտածել: Հիսուսն ասում էր՝,,Ոչ ոք ավելի մեծ սեր չունի, քան այն մեկը, որն իր հոգին տալիս է իր ընկերների համար: Դուք իմ ընկերներն եք,, / Հովհաննես 15,13,14/:

> Յուրաքանչյուր ժամերգության ժամանակ Տերը մեծ բաներ է անում մեզ համար՝ նա ներում է մեղքերը:

,, Տերը մեծ բաներ գործեց մեզ համար,,: Նա հիմնել է իր եկեղեցին և ուղարկել է իր առաքյալներին: Դա մի գործ է բոլոր մարդկանց համար: Եթե մենք այստեղ աշխարհի միայն այս մասով դիտարկենք, ապա մեք կարող ենք ասել՝ նա հոգ է տարել այն բանի համար, որ քրիստոնեական հավատը դարեր առաջ նաև այս մայրցամաքում իր արմատները գցի: Դուք դա ավելի լավ գիտեք, քան՝ ես: Դա ամենամեծ բանն է, որ նա արել է: Նա հոգ է տարել այն բանի համար, որ հավատը դարեր ի վեր պահպանվի

մինչ այսօր: Ինձ համար դա հրաշք է: Աստված մեծ բան է արել, որ մենք այսօր կարողանում ենք այս երկրում քրիստոնյա լինել: Ավելի ուշ նա առաքյալ է ուղարկել այս երկիր: Այսպես, մենք կարողացել ենք ընդունել Աստծո զավակությունը, դարձել ենք նորառաքելական քրիստոնյաներ: Տերը մեծ բաներ գործեց մեզ համար: Հիշեք բոլոր այն բաների մասին, ինչը նա արդեն արել է մեր կյանքում: Ինչքան հաճախ է նա արդեն մեզ օգնել մեր առօրյա կյանքում և մենք կարողացել ենք ասել. ,, Տերն է դա արել: Նա ներգործել է իմ կյանքի վրա և լուծել իմ խնդիրները,,: Իսկապես, Տերը մեծ բաներ է գործել մեզ համար: Նա մեզ նվիրել է իր կյանքը՝ ջրով և Հոգով վերածնվելու մեջ: Մի մեծ հրաշք:

Յուրաքանչյուր ժամերգության ժամանակ նա մեծ բաներ է անում մեզ համար: Ոչ մի մարդ ի վիճակի չէ դա անել: Նա մարում է մեր պարտքերը: Ոչ մի մարդ չի կարող դա անել: Միայն նա ունի դրա համար անհրաժեշտ զորությունը: Քո պարտքը մարված է, այն այլևս չկա: Նա մեծ բաներ է անում մեզ համար:

Նա փոխում է մեզ: Նա մեզ ձևավորում է Հիսուս Քրիստոսի պատկերի նմանությամբ: Աստվածային փոփոխության մի հրաշք: Որպես խեղճ մեղավորներ, ոչ կատարյալ մարդիկ, մենք քայլ առ քայլ ձևափոխվում ենք Հիսուս Քրիստոսի պատկերի նմանությամբ: Աստված մեծ բաներն է անում մեզ համար, և նա դա անում է արտակարգ ձևով: Նա կարող էր այդ գործում իր զորությունն ու հզորությունը ներդնել, բայց նա դա չի անում: Նա անում է սիրով և համբերությամբ: Նա ուժեղ փոփոխություններ է անում մեր հոգիներում, և այդ ամենը նա անում է սիրո, ողորմածության և համբերության միջոցով: Եվ նա ուզում է մեծ բաներ անել մեզ համար: Նա ուզում է հարսանիքը երկնքում մեզ հետ տոնել: Նա ցանկանում է մեզ հետ հավիտենական միասնության մեջ լինել: Նա ուզում է մեզ հետ երկրի վրա խաղաղության թագավորություն հաստատել, քանզի նա ուզում է բոլոր մարդկանց փրկություն նվիրել ինչպես այստեղ՝ երկրի վրա, այնպես էլ՝ անդրշիրիմյան աշխարհում:Մեզ հետ՝ թագավորական քահանայության հետ, նա ուզում է մարդկանց վրա փրկության աշխատանք անել:

Տեսեք, թե ինչ մեծ բաներ է նա անում մեզ համար, մեզ վրա և մեզ հետ : Այդ ամենը մեծ է, քանի որ մենք ունակ չենք դրա համար: Միայն Աստված կարող է դա անել- մեծ բաներ, որոնք վեր են մեր պատկերացումների կարողությունից, նաև՝ մեր սպասումներից: Մենք չենք կարող գեթ մեկ անգամ պատկերացնել, թե նա ինչ է մեզ տալու: Ինչպե՜ս ենք մենք ուրախանալու: Դա այնքան մեծ է, քանի որ մենք դա չենք վաստակել: Ոչ ոք չի կարող դա ինքնուրույն վաստակել:

Հիշենք այն ամենի մասին, ինչ նա անում է մեզ համար և դեռ անելու է: Լինենք շնորհակալ:

Ոչ ոք ի վիճակի չէ այն ամենը նկարագրել, ինչ Աստված անում է մեզ համար և արդեն արել է: Եվ դա այսօր մարդկանց համար խնդիր է: Մենք այնքան շատ բաներով ենք զբաղված, որ վտանգ կա, որ մենք այդ մեծ բաները, որոնք Աստված անում է մեզ համար, այլևս չընկալենք: Թույլ տվեք ինձ այսպես արտահայտվել՝ սատանան այնպես զբաղված է մեզ պահում, որպեսզի մենք ընդհանրապես չհիշենք այն մեծ բաների մասին, որը Աստված անում է մեզ համար: Մենք ստիպված ենք շատ այլ բաների մասին մտածել, շատ այլ բաներ հարթել, շատ այլ բաներ մյուսներին տեղեկացնել, շատ կարդալ...

Ես կարծում եմ, որ դուք հասկացաք, թե ինչ նկատի ունեմ: Դա վտանգ է: Մենք մոռանում ենք, թե ինչ է Աստված արել մեզ համար, և որպես դրա հետևանք՝ մենք այլևս ուրախություն չենք ունենում: Մենք անգամ սկսում ենք բողոքել: Մենք այլևս երջանիկ չենք լինում, և մեր վիճակն այնպիսին է դառնում, ինչպիսին Իսրայելի ժողովրդինն էր:

Եգիպտոսում իսրայելացիները ստրկացված էին, և Աստված ազատեց նրանց այդ ստրկությունից: Նա բաժանեց ծովը և օգնեց նրանց՝ գնալու դեպի ազատություն: Դա անհավատալի է հնչում, բայց դա

ճշմարտություն է: Պահանջվեց միայն մի քանի օր, և նրանք ամեն ինչ մոռացան ու սկսեցին փնթփնթալ՝,, Ջուրը դառն է: Եգիպտոսում մենք բավարար չափով ուտելիք ունեինք, իսկ այստեղ ոչինչ չկա,,: Մի քանի օր էր անցել, ինչ նրանք ազատվել էին ստրկությունից, բայց արդեն բողոքում էին:

Հիմա մի ասեք՝ ,, Օ, այս Իսրայելի ժողովուրդը, անհնար է,,; քանի որ մենք էլ ենք նույն ձևով անում: Դադարիր փնթփնթալ: Հիշիր այն մեծ բաների մասին, ինչը Տերն արել է քեզ համար, հիշիր, ինչ է նա անում քեզ համար և ինչ է անելու: Մնանք շնորհակալ ու մնանք ուրախ:

Սաղմոսում գրված է, որ ժողովուրդների մեջ ասելու են՝ ,, Տերը մեծ բաներ գործեց նրանց համար,,/ Սաղմոս 126,2/:

Ի՞նչ են ասում մեր հարևանները մեր մասին՝,, Տերը մեծ բաներ գործե՞ց նրանց համար,,: Ես կարծում եմ, դա մենք հազվադեպ ենք լսում: Ավելի հաճախ մենք այլ խոսքեր ենք լսում՝ ,, Իսկ ու՞ր է քո Աստվածը,,: Այս երգը մենք պատմության մեջ հաճախ ենք լսել: Հիշեք Հիսուսին խաչի վրա: Հենց նույնն էր լսում նա՝,,Ուրիշներին փրկեց,, իսկիրեն չի կարողանում փրկել: Քրիստոս՝ Իսրայելի թագավոր, թող ցած իջնի տանջանքի ցցից, որ մենք տեսնենք և հավատանք,, / Մարկոս 15;31,32/: Եվ նրանք ծաղրում էին նրան: Բայց, երբ նա մահացել էր, մի հռոմեացի հրամանատար, ով այդտեղ կանգնած էր, ասում էր՝ ,, Իսկապես, այս մարդը Աստծո Որդի էր,,/ Մարկոս 15;39/: Այդ մարդը տեսնում էր, թե ինչպես է մահանում Հիսուսը: Նա տեսնում էր, թե ինչպես է արձագանքում Հիսուսը և լսում էր , թե ինչ է ասում նա: Դա նրան համոզվածություն է տալիս՝ Այս մարդը Աստծո Որդի էր:

Եղբայրներ և քույրեր, բացահայտ կամ թաքնված հաճախ լսվում է այս կշտամբանքը՝,, Որտե՞ղ է քո Աստվածը,,: Դրա ազդեցության տակ չընկնեք կամ չհուսահատվեք: Հիշեք այն մեծ բաների մասին, ինչն արել է Տերը ձեզ համար և դեռ անում է, մնացե՛ք հավատարիմ:

Մենք ունենք մեր բոլոր քննությունները, փորձությունները, ինչպես էլ որ դրանք նկարագրել ուզենանք: Իսկ մարդիկ ասում են՝,, Որտե՞ղ է հիմա Աստված,,: Այդ հարցին դուք սպիտված չէ՛ք պատասխանել: Հավատարիմ մնացե՛ք, վստահե՛ք Աստծուն, ձեր սրտերում պահե՛ք խաղաղությունը: Երբ մարդիկ տեսնեն, որ մենք չենք դադարում և շարունակում ենք վստահել Աստծուն, որ մենք՝ չնայած ամեն ինչին, մեր սրտերում խաղաղությունն ենք պահում և մեր հավատը չենք կորցնում ու ասում ենք, որ իմ Հայրը հոգալու է ինձ համար, ես ապավինում եմ նրան, ապա նրանք որոշակի ժամանակից հետո կամրագրեն ու կասեն՝,, Աստված պետք է մեծ բաներ անի նրանց համար, միայն տեսեք, չնայած այն ամենին, ինչ նրանք ապրել են, նրանք հավատարիմ են մնում հավատի

Շրջանային առաքյալի օգնական Դավիդ Դեվարաջ / Հնդկաստան/

Շրջանային առաքյալ Փեթեր Շուլթե / Խաղաղ օվկիանոսի արևմուտք/

մեջ և տառապանքի մեջ խաղաղություն են կրում իրենց հոգիներում,,:

Սա տեսություն չէ, սա կարելի է ապրել: Ոչ հազվադեպ ենք լսում՝,,Ընդհանրապես հնարավոր չէ ադպես հանգիստ ու վստահ լինել, երբ գտնվում են այնպիսի հարաբերություններում, երբ Աստված պետք ինչ-որ առանձնահատուկ բան անի նրանց համար,,: Քննությունների ժամանակ մենք լիովին վստահում ենք և հավատարիմ ենք մնում, որովհետև մենք գիտենք, որ Աստված մեծ բաներ է արել մեզ համար, անում է և անելու է: Մենք ծառայում ենք Աստծուն մեր լավագույն ուժերով, մենք զոհաբերում ենք, և նաև այդ ժամանակ ենք լսում նույնը՝,, Որտե՞ղ է քո Աստվածը: Դա՞ էր վարձքը քո աշխատանքի, քո զոհաբերության դիմաց: Դա իզուր էր արված, քեզ չեն գնահատել, դու վատնել ես քո ուժը,,:

Թողեք, որ նրանք խոսեն, և մի վհատվեք: Այն հարցին, թե՝ ,, Որտե՞ղ է քո Աստվածը,, ; մենք բոլորովին ստիպված չենք պատասխանել: Մենք հավատարիմ ենք մնում: Մենք շարունակում ենք ծառայել Աստծուն, քանի որ մենք դրա համար ոչ մի վարձատրություն չենք սպասում: Մենք զոհաբերությունը չենք մատուցում, որպեսզի հարստանանք: Մենք ծառայում ենք Աստծուն՝ սիրուց ելնելով: Մենք նրան զոհաբերություն ենք մատուցում շնորհակալությունից ելնելով այն ամենի համար , ինչ նա տվել է մեզ:

Ես ոչ մի պատճառ չունեմ դադարեցնելու ծառայությունն ու զոհաբերություն կատարելը: Ես սիրում եմ նրան, որովհետև նախ նա է սիրում ինձ: Ինչ էլ պատահի, ես միշտ պատճառ ունեմ Աստծուն ծառայելու և զոհաբերություն մատուցելու:

,,Տերը մեծ բաներ գործեց նրանց համար,,- քանզի նրանք դեռ մոտիվացված են նրան ծառայելու և զոհաբերություն մատուցելու:

Մարդիկ տեսնում են նաև մեր համայնքները և ամրագրում են -ի դեպ, մենք չենք փակում մեր աչքերը այն բանի առաջ, որ բաներ են լինում, որոնք ընդհանուր առմամբ չպետք է լինեին: Մենք՝ բոլորս, ոչ կատարյալ մարդիկ ենք, և արդյունքն էլ հենց դրանից է բխում: Եվ կրկին լսում են այս ձայնը՝,, Որտե՞ղ է Աստված: Նայիր, ինչպես են իրենց պահում նրանք, ովքեր ուզում են լինել Աստծո զավակներ: Դա ավելի վատ է, քան այլ բաներ, և ապա նրանք ասում են, որ Քրիստոսը լինի իրենց մեջ - ծիծաղելի է,,:

Թույլ տվեք նրանց խոսել: Մենք մնում ենք հավատարիմ, մենք ներում ենք միմյանց և մենք կապի մեջ ենք մնում Աստծո հետ: Այն ուժով, որը ստանում ենք Հիսուս Քրիստոսից, և նրա ողորմածության օգնությամբ մենք կարողանում ենք տարբերությունները մի կողմ դնել, իրար ներել և հաղթահարել բոլոր այն դժվարությունները, որոնք կարող են ծագել որևէ համայնքում: Որոշակի ժամանակ հետո մարդիկ պետք է ամրագրեն՝,, Այս միասնության մեջ ինչ-որ առանձնահատուկ բան կա: Եթե ինչ-որ տեղից բռնկում առաջանա, ապա ամեն ինչ կխորտակվի: Սակայն, նրանք միասնական են մնում, ներում են միմյանց: Սա ամբողջովին արտասովոր է,,:

Սիրելի քույր-եղբայրներ, մենք չենք կարող խանգարել, որ մարդիկ ասեն՝,, Որտե՞ղ է ձեր Աստվածը,,; քանի որ մենք գիտենք, թե ինչ մեծ բաներ է արել Աստված մեզ համար, մենք հավատարիմ ենք մնում և վստահում ենք նրան նաև դժվար հարաբերություններում: Մենք մնում ենք այս մտքին՝ մենք ծառայում ենք Տիրոջը, որովհետև նա մեզ սիրում է, և մենք սիրում ենք նրան: Ինչ էլ պատահի, մենք ներում ենք միմյանց և միասնական ենք մնում Քրիստոսով: Դա նշան է այն բանի, որ Տերը մեզ հետ է:

Մեր խոսքի մեջ այսպես է գրված՝,, Տեր, ետ դարձրու մեր գերությունը, հարավի հեղեղների պես,,: Հրեաները, որոնք Բաբելոնից նորից վերադարձան

Երուսաղեմ, չէին մոռացել, որ դեռ կան մարդիկ, ովքեր ետ են մնացել և նրանք ուզում են, որ Աստված նրանց համար էլ հնարավոր դարձնի այն, ինչ նվիրել էր իրենց:

Մենք գիտակցում ենք. որ Աստված մեծ բաներ է արել մեզ համար: Եվ մենք ցանկանում ենք, որ նա մեծ բաներ անի նաև ուրիշների վրա: Մենք չենք մտածում այսպես՝,, Մենք փրկվելու ենք, մենք օրհնվելու ենք, իսկ դա մենք վաստակել ենք,,: Մենք ցանկանում ենք, որ բոլոր հոգիները՝ լինեն այստեղ կամ անդրշիրիմյան աշխարհում, մաս ունենան այն բանից, ինչը նվիրվել է մեզ:

Գալիք կիրակի օրը մենք տոնելու ենք ժամերգություն ննջեցյալների համար: Մենք աղոթում ենք անդրշիրիմյան աշխարհի հոգիների համար՝,, Տեր, մեծ բաներ արա նրանց համար, ինչպես որ արել ես մեզ համար: Թող, որ նրանք էլ իմանան, թե ինչ մեծ ես դու,,:

Այս տողի այլ թարգմանություններ այսպես են հնչում՝,, Տեր, փոխիր մեր ճակատագիրը,, ; որը նույնպես համապատասխանում է:

Երբ հրեաները ոտք դրեցին Երուսաղեմ, ու թեև նրանք նորից իրենց հայրենիքում էին, հասկացան, որ անելու շատ բան կա, և, որ նրանք կանգնած են մեծ խնդիրների առաջ: Դրա համար էլ հնչում է երկրորդ խնդրանքը՝ Մյուսներին էլ ետ բեր և փոխիր մեր ճակատագիրը: Դա նաև մեր խնդրանքն է:

Մենք գիտակցում ենք մեծ գործերը, որոնք Աստված արել է մեզ համար, բայց մենք գիտենք նաև, որ լիովին փրկված չենք: Դրա համար էլ մենք աղոթում ենք՝,, Տեր, ուղարկիր քո Որդուն, փրկիր մեզ, փոխիր մեր ճակատագիրը, թույլ տուր մեզ քո թագավորություն մտնելու իրավունք ունենալ,,: Դա կա և մնում է մեր նպատակը: Սիրելի քույր-եղբայրներ, մի զլացեք Հիսուս Քրիստոսի գալստյան համար աղոթել: Անշուշտ, մենք իրավունք ունենք մեր բոլոր փափագներն ու ցանկությունները աղոթքով ներկայացնելու մեր երկնային Հորը, սակայն, մեր ամենամեծ ցանկությունը Տիրոջ հետ հավետ միասնության մեջ լինելն է: Դա պետք է լինի մեր առաջին խնդրանքը ամենօրյա աղոթքներում:

Այստեղ, խոսքի մեջ գրված է՝,,… հարավի հեղեղների պես,,: Դա վերաբերում է Իսրայելի կլիմային: Այնտեղ շոգ է ու չորային, և անապատային շրջաններում ջուր չկա: Բայց, երբ անձրև է գալիս, քիչ ժամեր անց առուներ և գետեր են առաջանում այնտեղ, որտեղ դրանք նախապես չկային: Նաև այս ֆենոմենն է այստեղ նկատի առնված՝ որտեղ նախապես անապատ էր, ուրիշ ոչինչ չկար, առաջանում են առուներ, առաջանում է կյանք:

Սա մի գեղեցիկ պատկեր է Քրիստոսի գալստյան համար: Կարելի է ասել, որ մենք նախապես ոչինչ չենք տեսնում, բայց կարճ ժամանակի ընթավքում, մի ակնթարթում Աստված ամեն ինչ փոխում է: Հիմա մենք տեսնում ենք համայնք՝ մարդկային անկատարելիությամբ և մեղքերով լի: Բայց Տերը գալու է և միանգամից հայտնվելու է Քրիստոսի հարսնացուն, և մենք տեսնելու ենք Քրիստոսի եկեղեցու փառահեղությունը: Սա ամենամեծ հրաշքն է, որը Աստված իրականացնելու է մեր մեջ: Դա դեռ լիովին անհնար է թվում:

Երբ ես հանդիպում եմ անցկացնում երեխաների հետ, հաճախ ինձ հարցնում են՝,, Գլխավոր առաքյալ, ինչ է լինելու, երբ Տեր Հիսուսը գա,,: Ես ստիպված եմ նրանց ասել.,, Ես չգիտեմ, ես դա չեմ կարող ձեզ բացատրել, բայց ես վստահում եմ Աստծուն: Նրա համար ոչ մի անհնար բան չկա: Ոչ ոք չի կարող դա բացատրել, ոչ ոք չի կարող դա ըմբռնել, բայց նա դա անելու է: Եվ նա որոշել է, որ ես պետք է մասնակից լինեմ այդ իրողությանը, և նաև՝ դու: Մենք բոլորս պետք է ներկա լինենք այդ իրադարձությանը:

Աստված մեծ բաներ է արել մեզ համար և նա մեծ բաներ է անելու բոլորի համար, ովքեր մինչև վերջ հավատարիմ կմնան, իսկ դա՝ մենք ենք:

Հիմնական մտքեր

Մենք գովաբանում ենք Աստծուն իր բարեգործությունների համար: Մենք վկայում ենք դրանք նրանով, որ ապացուցում ենք մեր վստահությունը քննությունների ժամանակ, առանց հոգնելու ծառայում ենք Աստծուն և մնում ենք եղբայրական սիրո մեջ: Մենք խնդրում ենք Աստծուն՝ անելու մեր մերձավորի համար այն բարեգործությունները, ինչ մեզ համար է արել, և մեզ առաջնորդել դեպի իր փառահեղությունը:

ԳԱՆՁԱՊԵՏԸ ԵԹՈՎՊԻԱՅԻՑ

ԸՍՏ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅԻ 8;26-40

Փիլիպպոսը յոթ սարկավագներից մեկն է, ովքեր ընտրվել էին հունախոս այրիների համար հոգ տանելու նպատակով: Սակայն, Երուսաղեմի համայնքը հալածվեց և ցիրուցան եղավ: Փիլիպպոսը գնաց Սամարիա: Այնտեղ նա բնակիչներին պատմում էր Հիսուս Քրիստոսի մասին:

Մի հրեշտակ գալիս է Փիլիպպոսի մոտ և ասում. ,, Վեր կաց ու գնա այն ճանապարհով, որը իջնում է Երուսաղեմից Գազա,,: Փիլիպպոսը ճանապարհ է ընկնում: Որոշ ժամանակ անց, հեռվում նա տեսնում է մի մոտեցող կառք: Մարդը, ով նստած էր կառքի մեջ, գալիս էր հեռվից: Նա գալիս էր Եթովպիայից, պալատական պաշտոնյա էր - նա կառավարում էր Կանդակա թագուհու գանձերը: Գանձապետը ուխտագնացության էր գնացել Երուսաղեմի տաճար և վերադառնում էր: Նա նստել էր իր կառքի մեջ և բարձրաձայն մի գրվածք էր կարդում:



Սուրբ Հոգին ասում է Փիլիպպոսին . ,, Առաջացիր և այդ կառքի մոտ գնա,,: Փիլիպպոսը գնում է և լսում, որ այդ մարդը Եսայի մարգարե էր ընթերցում: Փիլիպպոսը հարցնում է նրան.:,,Հասկանու՞մ ես արդյոք, ինչ որ ընթերցում ես,,: Գանձապետը պատասխանում է.,, Ինչպե՞ս կկարողանամ հասկանալ, եթե մեկն ինձ չառաջնորդի,,: Նա խնդրում է Փիլիպպոսին, որ նա բարձրանա և իր մոտ նստի: Փիլիպպոսը բացատրում է գանձապետին, որ Եսային խոսում է Հիսուսի մասին: Փիլիպպոսը պատմում է այն մասին, թե ինչ է արել Հիսուսը մարդկանց համար: Գանձապետն ուշադիր լսում է: Երբ նրանք շարունակում են ճանապարհը, հասնում են մի ջրի մոտ: Գանձապետը կանչում է.,, Ահա ջուր, ի՞նչն է ինձ արգելում մկրտվել,,: Նա կանգնեցնում է կառքը, և երկուսն էլ մտնում են ջուրը: Փիլիպպոսը մկրտում է գանձապետին: Երբ նրանք դուրս են գալիս ջրից, Փիլիպպոսը հանկարծակի անհետանում է: Նրան հափշտակում է Սուրբ Հոգին: Իսկ գանձապետն ուրախությամբ լի՝ վերադառնում է իր հայրենիքը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՆՅԱՅԻՆ՝ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ / ՌՈՒՍԱՍՏԱՆ/

Ողջույն: Իմ անունը Անյա է և ես 14 տարեկան եմ:

Այստեղ դուք տեսնում եք իմ ընտանիքը՝ իմ հայրիկի անունը Ալեքսադր է, մայրիկիս անունը՝ Օքսանա, ես ունեմ մի կրտսեր եղբայր՝ Արտյոմը, որը երեք ու կես տարեկան է: Բացի այդ, մեր ընտանիքի անդամներ են երկու տատիկներս՝ Օլգան ու Սոֆիան, և իմ պապիկը: Նրա անունը Սերգեյ է, նա առաքյալ է:

Մենք ապրում ենք աշխարհի ամենագեղեցիկ քաղաքում, այն կոչվում է Սանկտ Պետերբուրգ: Անունը կապված է Սիմոն Պետրոս առաքյալի անվան հետ: Մեր քաղաքը հաճախ բնորոշվում է որպես Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաք: Այստեղ կան շատ ջրանցքներ և գետեր:

Ես հաճախում եմ օժանդակ դպրոց: Այնտեղ սովորում են հոգեկան առանձնահատկություններ ունեցող երեխաներ: Ես շատ եմ սիրում իմ դպրոցը և ամեն օր հաճույքով ու մեծ բավականությամբ եմ գնում այնտեղ: Մեզ դասավանդում են շատ առարկաներ՝ ռուսերեն, գրականություն, մաթեմատիկա, աշխարհագրություն և անգամ համակարգչային պարապմունք ենք ունենում: Մենք նաև աշխատանքի ուսուցում ենք անցնում, այն իմ ամենասիրած առարկան է: Մենք սովորում ենք կարի մեքենայով կարելը: Ես արդեն սովորել եմ շատ լավ կարել, և անցած տարի ես կարեցի գիշերանոց ու գոգնոց: Մենք մեր դասարանում միմյանց հետ շատ լավ ենք: Դասերից հետո ես այցելում եմ հետաքրքիր միջոցառումների վերականգնողական կենտրոնում: Այնտեղ ես զբաղվում եմ սպորտով և ուսանում եմ նուրբ շարժողական հմտություններ:



Ես շատ եմ սիրում կենդանիներ, ամենից շատ՝ թռչուններ: Ինձ ուրախություն է պարգևում նրանց ուսումնասիրելը և նրանց համար հոգ տանելը: Մենք ունենք նաև ընտանի կենդանի՝ Մուսսյա փիսիկին: Նա արդեն շուրջ տասը տարի ապրում է մեզ մոտ: Մուսսյան շատ հանգիստ և համեստ է: Մենք բոլորս սիրում ենք նրան:

Ամռանը մեր ողջ ընտանիքը հաճած է գնում ձկնորսության:

Կամ էլ մենք հեծանվային երթ ենք կատարում Պավլովյան պուրակում: Հաճույքով մենք մեկնում ենք քաղաք դուրս և լիցքաթափվում ենք՝ կազմակերպելով պիկնիկ :

Վերջերս ես ներկա էի մի առանձնահատուկ ժամերգության: Մեր եկեղեցում ծառայում էր գլխավոր առաքյալ Շնայդերը: Մեր գլխավոր առաքյալին ուղեկցում էին առաքյալներ Գերմանիայից և Շվեյցարիայից: Եկեղեցու մթնոլորտը տոնական էր: Հիշատակի համար լուսանկարվեցինք՝ տատիկը, պապիկը, գլխավոր առաքյալը, շրջանային առաքյալ Վոլֆգանգ Նադոլնին, մայրս և ես:

Ես հաճախում եմ կիրակնօրյա դպրոց և այնտեղ ինձ շատ լավ եմ զգում: Նոր տարուց առաջ մենք՝ կիրակնօրյա դպրոցի աշակերտներս, տոնեցինք տոն մեր ծնողների ու սպասավոր եղբայրների հետ միասին:



Աղբյուրը՝ Ամսագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 02/20; լուսանկարները՝ մանավոր© Grispb - stock.adobe.com, © Tatiana - stock.adobe.com

Լուսանկարը՝ Օլիվեր Դյուբենի

Ուսմունք և կյանք - Գործել Սուրբ գրքի համաձայն

Քարոզ, հոգու խնամք և ղեկավար գործունեություն՝ այս երեքն էլ պատկանում են մեկ ուղղության: Գլխավոր առաքյալը սա պարզաբանեց առաքելոց ծառայության օրինակով: Այնուամենայնիվ, սրանք միակը չեն, որոնք նույն ուղղվածությունն ունեն: Ինչ է ասում Աստվածաշունչը - և ինչ՝ ոչ:

Իրենց ձեռնադրության ժամանակ Աստված առաքյալներին հայտնում է պաշտոնի հետ կապված պաշտոնեական լիազորությունները, որպեսզի նրանք կարողանան իրականացնել առաքելական առաջադրանքը: Պաշտոնական լիազորությունները հնարավորություն են տալիս առաքյալներին՝ օգնելու մարդկանց փրկություն գործում նրանով, որ գործում են իրենց ուղարկող Հիսուս Քրիստոսի առաջադրանքով ու անունով: Երբ առաքյալները այլ պաշտոնների համար ձեռնադրություն են կատարում, ապա նրանք նրանց են վստահում իրենց պաշտոնական լիազորության մի մասը:

Քարոզել Աստվածաշնչի հիման վրա

Առաքելական ծառայությունը, այլ գործառույթների հետ միասին, տեղեկացնում է Ավետարանը / Հռոմ. 1,1/: Առաջին առաքյալները տեղեկացնում էին այն, ինչ ,,տեսել և լսել,, էին Հիսուսից / Հովհաննես Ա 1,1/: Պողոսը վկայություն էր տալիս Հարություն առնվածի հետ հանդիպման մասին և նա ուսուցանում էր այն, ինչ նա ,, տեսել ու լսել,, էր նրանից /Գործք 22;14,15/:

սօրվա առաքյալների քարոզը հիմնվում է Սուրբ գրքի վրա, ամենից առաջ՝ Նոր կտակարանի: Որպեսզի Պողոսը շեշտի Ավետարանի առավելությունը մովսեական օրենքի նկատմամբ, նա հակադրվում է գրի ոգուն / Կորնթ. Բ 3,6/:Սակայն, աստվածաշնչյան այս տողից բոլորին անտեղի կլիներ եզրակացնել, որ առաքյալը իր պաշտոնեական լիազորության հիման վրա կարող է հակադրվել Սուրբ գրքին: Առաքյալի և մնացած սպասավոր եղբայրների քարոզը միշտ պետք է լինի Սուրբ գրքի համաձայն:

,,Որպես Աստծո խորհուրդների տնտեսներ,, իրենց որակման մեջ այսօրվա առաքյալները ունեն առաջադրանք և ունակություն՝ մեկնաբանելու Աստվածաշունչը Սուրբ Հոգու օգնությամբ: Ղեկավարվելով Սուրբ Հոգով՝ առաքելոց ծառայությունը այսօրվա հավատացյալներին պարզաբանում է Աստվածաշնչի նշանակությունը և ուսուցանում է հեղինակավոր ձևով , թե ինչպես պետք է Ավետարանը կյանքի կոչել/ Մատթեոս 28,20/:

Աստվածաշնչյան տեքստը ներկայումս մեկնաբանվում է այն նպատակով, որ այն այսօրվա ժամանակներում կիրառելի դառնա; առաքյալների քարոզը ուժեղացնում է մարդկանց հավատը, զորեղացնում է նրանց վստահությունը Աստծո հանդեպ և խորացնում է նրանց գիտելիքները / օրինակ՝ անդրշիրիմյան ոլորտներում փրկության առումով/:

Մեկնաբանման կանոնները

Ես կարևոր եմ համարում հիշեցնել մի քանի կանոններ, որոնց պետք է հետևել, եթե մենք աստվածաշնչյան տեքստ ենք մեկնաբանում:

- Հիսուս Քրիստոսը մատնանշել է, որ Հին կտակարանը տեղեկացնում է իր գալու ու գործունեության մասին / Հովհաննես 5;36, Ղուկաս 24;27/: Առաքյալներին հանձնարարվեց Հին կտակարանը մեկնաբանել՝ ելնելով Հիսուս Քրիստոսից՝ Աստծո Որդուց: Մեր հավատի տեսանկյունից ելնելով՝ Հին կտակարանի գրվածքների բովանդակությունը համապատասխանում է միայն այն դեպքում, երբ այն, ինչպես վկայվում է Նոր կտակարանում, համահունչ է Ավետարանին / Նորառաքելական եկեղեցու դավանաբանություն, հատված 1,2,5,2/:
- Աստվածաշնչյան յուրաքանչյուր տեքստ պետք է կարդացվի իր համատեքստի վրա ուշադրություն

դարձնելով: Դրա մեկնաբանությունը պետք է միշտ լինի Ավետարանի հիմնական ասելիքի համաձայն:

- Հիսուսի հրաշքներն ու առակները, որոնք նա տալիս էր, իրավունք չկա վերամեկնաբանվելու: Տերը Ղուկասի 17-ում խոսում է երկու անձանց մասին, ովքեր նույն իրավիճակում են գտնվում, որոնցից մեկը ընդունվում է, իսկ մյուսը՝ ոչ: Սրանից ելնելով՝ մենք չենք կարող փրկվածների տոկոսը նվազեցնել: /Ղուկասի 19/ Տասը մնասների առակում պատմվող այն իրողությունը, ըստ որի՝ ծառաներից մեկը տասը, իսկ մյուսը հինգ քաղաքի վրա է իշխանություն ստանում, չի նշանակում, թե մեր փրկության էությունը, որը մեզ նվիրում է Աստված, մեր աշխատանքի չափից է կախված:
- Չպետք է երբեք ուշադրությունից դուրս թողնել, որ Աստվածաշնչի բոլոր թարգմանությունները հին տեքստերի մեկնաբանություններ են: Օրինակ, ,, պաշտոն,, ,,ծառայություն,, կամ ,, եկեղեցի,, հասկացությունները ըստ լեզվի ու թարգմանիչների աստվածաբանական պատկերացումների՝ տարբեր ձևերով են թարգմանվում: Մենք պետք է հիմնականում ուշադրության տակ ունենանք հին տեքստերը, եթե մենք ուզում ենք կենսունակ մեկնաբանություն ունենալ:
- Ավետարանները, Գործ առաքելոցը և առաքյալների թղթերը տարբեր ժամանակներում են գրվել և արտացոլել են իրենց հրատարակողների ժամանակաշրջանի իրավիճակները: Տարբեր թղթեր ուղարկվել են համայնքներին, որոնց կապն ու կառուցվածքը հաճախ հիմնականում տարբերվում էին: Ուշ շրջանի քրիստոնեական համայնքները շատ բաներում այլ էին, քան՝ վաղ շրջանինը:
- ՏՎերջապես - եվ դա ամենից առաջ- առաքյալների առաջադրանքը Աստվածաշնչի խոսքը, որը վճռորոշ է մարդկանց փրկության համար, տեղեկացնելն ու բացատրելն է: Կարևոր է այն ամենը, ինչը վերաբերում է Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատին, նրա կյանքին և գործին: Այլ թեմաների վերաբերյալ աստվածաշնչյան տեքստերով զբաղվելը թող հետաքրքրությունից ելնելով լինի, այնուամենայնիվ, նրանք ոչ մի դեպքում չեն կարող նույն մակարդակով ներկայացնել Ավետարանի հիմնական ավետիսը:

Ոչ մի ուիշ բան, քան Հիսուսին ցույց տալը

Առաքելոց ծառայությունը նաև այլ ասպեկտ է ընդգրկում: Առաքյալները պետք է Հիսուս Քրիստոսի վկաները լինեն: Տերը խոսում էր Պողոսի հետ . ,,Ես քեզ երևացի նրա համար, որ քեզ նշանակեմ պաշտոնյա և վկա այն բոլորի համար, որոնց մեջ ինձ տեսար և այն բաների համար, որոնցով պիտի երևամ քեզ,, / Գործք առաքելոց 26,26/:

Այսօրվա առաքյալները ևս կոչված են լինելու Քրիստոսի վկաներ: Առաքելոց ծառայությունը պետք է ներկայումս Հիսուս Քրիստոսի կամքը նաև նրա գործերի միջոցով պարզաբանել տա և դրանից ելնելով՝ եկեղեցու համար համապատասխան եզրահանգումներ անի:

Այստեղ նշված են մի քանի օրինակներ՝

- Հիսուսը իր առաքյալների միջոցով միայն բացառիկ հրաշքներ է իրականացնել տալիս - նա նրանցից սպասում է, որ նրանք առաջին հերթին իրենց նվիրեն մարդկանց փրկությանը:
- Աստծո գործը տարբեր երկրներում շատ տպավորիչ ձևով է զարգացել - որպեսզի իրենց հավատով ապրեն, նորառաքելական քրիստոնյաները ստիպված չեն հավատարիմ չլինել իրենց մշակույթին և իրենց համապատասխանեցնել նրանց կյանքի ոճին, ովքեր իրենց վկայություն են տվել:
- Հիսուս Քրիստոսը պարզաբանել է, որ իր գալստյան ժամանակը չի կարող որոշվել ոչ մի մարդու կողմից: Ով ուզում է ինչ-որ ձևով Քրիստոսի գալուստը հաստատագրել, նա Տիրոջ կողմից հիասթափության կարժանանա- առաքյալների ծառայության առաջադրանքը Քրիստոսի գալստյան ամիս ամսաթիվը

ամրագրելը չէ, այլ՝ նրա գալստյան հույսը արթուն պահելը:

- Բոլոր սպասումներին հակառակ՝ կնքված հոգիների թիվը աշխարհի բոլոր մասերում արագորեն չի աճում - Տիրոջ գալուստը կախված չէ Նորառաքելական եկեղեցու անդամների թվից, ովքեր ապրում են առանձին երկրներում:

Առաջնորդել Քրիստոսի ոգով

Ինքնըստինքյան հասկանալի է, որ եկեղեցին կարիք ունի ղեկավարող և վարչական գործունեության: Այդ պատասխանատու ոլորտների ղեկավարումը պահանջում է հատուկ ունակություններ ու գիտելիքներ, օրինակ, մենեջմենտի ու կազմակերպության ոլորտում: Անգամ, եթե այդ գործունեությունները վստահվում են սպասավոր եղբայրներին, ընդհանուր առմամբ, դրանք կապված չեն նրանց պաշտոնական լիազորությունների հետ: Պարզ է, որ գլխավոր առաքյալը և շրջանային առաքյալը չեն գործում Հիսուս Քրիստոսի անունով և լիազորությամբ, երբ նրանք կազմակերպական կամ ֆինանսական որոշումներ են կայացնում: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ղեկավարող ուժ եկեղեցու բոլոր հարթակներում պետք է Քրիստոսի ոգով որոշի և գործի:

Ուղղություններ, որոնք ուսմունք չեն

Նորից դառնանք Պողոս առաքյալին: Նա եկեղեցում տարբեր ֆունկիաներ էր կատարում: Որպես առաքյալ՝ նա տեղեկացնում էր Ավետարանը և վկայում էր Քրիստոսին: Սակայն, նա ղեկավարում էր նաև համայնքներ, որոնց համար նա պատասխանատու էր, և ուսումնասիրում էր այն շրջապատը, որում նա ապրում էր: Նամակները բովանդակում էին Քրիստոսով փրկության վերաբերյալ ասելիքներ, որոնք հիմնվում էին առաքյալի առաքելական լիազորության վրա:

Սակայն, դրանցում գտնվում էին համայնքների ղեկավարման համար ուղղություններ, որոնք ընդհանուր ուսմունքին չէին պատկանում: Դրանք արդյունք էին այդ ժամանակների կյանքի պայմանների և վավերական էին միայն այդ առումով: Այսպես օրինակ, կանանց պարտականությունը Կորինթում լռելն էր / Կորնթ. Ա 14;34/ և ուսուցանելու արգելքը / Տիմոթեոս Ա 2,12/- դրան հակառակ՝ Կեսարիայում նրանք գուշակություն անելու իրավունք ունեին / Գործք 21,9/: Կամ նաև պահանջները նրանց հագուստի և սանրվածքի տեսանկյունից / Տիմոթեոս Ա 2,9/:

Հոգու խնամք նախապատրաստությամբ

Ավարտելով՝ ուզում եմ կարճ անդրադառնալ Աստվածաշնչի կիրառմանը հոգու խնամքի նպատակով այցելությունների շրջանակում: Շատ վայրերում սովորույթ է դարձել սպասավոր եղբորը խնդրելը, որ Աստվածաշունչը ,, պատահականորեն ,, բացի, որպեսզի մի հատված կարդա և մեկնաբանի: Այս ավանդույթն արժանի է հարգանքի, բայց այն ռիսկային է: Մենք գիտենք, որ աստվածաշնչյան տեքստը պետք է մեկնաբանվի իր համատեքստին համահունչ: Իսկ հազիվ թե դա հնարավոր լինի, եթե խոսքը գնում է պատահական բացված աստվածաշնչյան խոսքի մասին: Այդ խոսքը կարող է ոչ համապատասխան ձևով մեկնաբանվել: Կարող է այնպես լինել, որ քույր-եղբայրները սպասավոր եղբոր կողմից կարդացվող խոսքը որպես մարգարեական կամ աստվածային խոստում ընկալեն: Նրանք գալիս են այն գիտակցության, որ Աստված իրենց ցանկությունները լսելու է և որոշակի ձևով գործելու է: Հազվադեպ չեն այն դեպքերը, երբ նման հույսերը հիասթափության են արժանանում: Գիտակցենք, որ սպասավոր եղբոր առաջադրանքը քույր-եղբայրների ապագան հայտնելը չէ: Նրա առաջադրանքը կայանում է նրանում, որ ղեկավարվի Սուրբ Հոգու կողմից, որպեսզի ուժեղացնի քույր-եղբայրների հավատն ու Աստծո հանդեպ վստահությունը:

Արդյո՞ք լավ չէր լինի, եթե սպասավոր եղբայրը նախապատրաստի իր այցելությունը նրանով, որ Աստծուն խնդրի իր մեջ արթնացնելու աստվածաշնչյան խոսքը, որը որպես ուղեցույց կարող է ծառայել հոգու խնամքի համար: Հասկանալի է, որ նա չպետք է դրանով քարոզ անցկացնի, այլ պետք է մի քանի միտք փոխանակի քույր-եղբայրների հետ աստվածաշնչյան տվյալ խոսքի վերաբերյալ:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանսշթրասսե 243,8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիխ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233,63263 Նոյ-Իզենբուրգ/Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Գլխավոր առաքյալ՝ Միայն արիություն - ամեն ինչ լավ կլինի

2020-ի մարտ, ելքի արգելք Ֆրանսիայում: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը ևս տանն է մնացել՝ շաբաթներ շարունակ առանց Սուրբ Հաղորդության: Սակայն, նա իր արիությունը չի կորցրել.,, Ես գիտեմ, որ Աստված իր զավակներին հենց դժվար իրավիճակներում միայնակ չի թողնում,,:

,,Ես այս ճգնաժամը շատ լուրջ եմ ընդունում,, ;- հարցազրույցում, որը լուսաբանվել է nak.org -ի պաշտոնական ծանոթագրություններում, -ասում է եկեղեցու ղեկավարը, : ,, Ցավոք, դեռ ավելի շատ զոհեր են լինելու: Մենք ցավակցում ենք զոհերին և աղոթում ենք նրանց համար,,:

Պաշտոնական սահմանափակումների պատճառով նա ստիված չեղարկել է շատ ճանապարհորդություններ: ,, Այս պահին ոչ ոք չգիտի, թե ինչպես է զարգանալու իրավիճակը այսուհետ: Բոլոր մարդկանց նման ես էլ եմ գտնվում այդ իրավիճակում,,:

,,Մնացեք տանը և արեք լավագույնը այս իրավիճակում,, ; -առաջարկում է գլխավոր առաքյալը հավատացյալ քույր-եղբայրներին: Նա շնորհակալություն է հայտնում բոլորին, ովքեր նվիրվում և օգնում են միմյանց: ,, Իսկապես արդեն տեսանելի է, թե ինչքան շատ մարդիկ են պատրաստ նման իրավիճակում օգնել մյուսներին,,:

Լուսանկարը՝ Օլիվեր Ռյութթենի

Իմանալ, թե ինչն է իրականում կարևոր

,,Ես գիտեմ, որ շատ քույր-եղբայրներ հեռու են լինելու Սուրբ Հաղորդության ճաշակումից մինչև այս համաճարակի վերջը,, ;-շեշտում է եկեղեցու ղեկավարը: ,, Ես կիսում եմ նրանց ցավը,,: Հնարավորություն չկա ,, հավատացյալների միասնության մեջ այս տոնը լիակատար ձևով փոխարինելու,, ;- ասում է նա եկեղեցու խոսնակ Փեթեր Յոհաննինգի հետ հարցազրույցի ժամանակ:

Թեև քննարկվում են փոխարինման տարբեր ձևեր- կամ առանձնացված նշխարների նախապես հատկացում կամ սպասավոր եղբոր կողմից դրանց փոխարինաբար ընդունում, ինչպես արվում է ննջեցյալների համար անցկացվող ժամերգության ժամանակ: Բոլոր դեպքերում՝ ,, Մենք պետք է Քրիստոսի արյունն ու մարմինը ճաշակենք նրանով, որ արժանապատիվ ձևով ընդունենք նշխարը, որն առանձնացվելու

և տրվելու է քարոզչական պաշտոն կատարող սպասավորի կողմից ,, ;- վկայակոչում է նա հավատամքի յոթերորդ դրույթը:

,,Մենք չգիտենք, թե ինչու է Աստված նման իրավիճակ թույլ տալիս,, ;-ասում է գլխավոր առաքյալը: ,, Սակայն ես գիտեմ, որ հոգևորի պակասը նպաստեց այս ժամանակներին, որ մենք ավելի շատ գիտակցենք, թե ինչ կարևոր են մեզ համար ժամերգությունը, սպասավոր եղբայրները և Սուրբ Հաղորդությունը,,:

Սովորել հավատացյալ քույր-եղբայրներից

,,Հենց այս օրերին մենք կարող ենք մեր հավատացյալ քույր-եղբայրներից սովորել, որոնք արդեն մեծ ցավ են ունեցել,, ;- հիշեցրեց նա ինդոնեզական երկրաշարժի զոհերի մասին, որոնք չկարողացան պաշտպանվել; աֆրիկյան փախստականների մասին, որոնք տարիներ շարունակ արգելափակված են; կոնգոյական պատերազմի զոհերի մասին,որոնք գիշերվա ընթացքում ամեն ինչ կորցրել էին և Արևմտյան Աֆրիկայի քրիստոնյաների մասին, որոնք սպանվեցին, երբ նրանք մասնակցում էին ժամերգությանը:

Գլխավոր առաքյալը չի ուզում Կորոնա- ճգնաժամը թերագնահատել: ,, Ընդհակառակը,,: Խոսքը գնում է հավատացյալ քույր-եղբայրներից սովորելու մասին: ,, Ինչու՞ կարող են նրանք ուժեղ մնալ՝ չնայած բոլոր փորձություններին: Քանի որ նրանք Քրիստոսի մեջ խոր արմատներ ունեն զցած: Նրանց գաղտնիքը Տիրոջ հանդեպ ոնեցած սերն է,,: Ուսմունքը, որը բխում է դրանից, այս է՝ ,, Հիմա ամենից առաջ խոսքը նրա մասին է, որ մեր վերաբերմունքը Քրիստոսի հանդեպ պահպանենք,,:

Ամուր մնալ սիրո և վստահության մեջ

,,Մենք պետք է հենց այս ժամանակներում ավելի շատ Աստծուն վստահենք,, ;- կոչ է անում եկեղեցու ղեկավարը: ,, Վստահենք Աստծուն - նա միշտ գիտի, թե ինչպես բոլոր նրանց, ովքեր սիրում են իրեն, կարող է տալ այն ամենը, ինչ անհրաժեշտ է նրանց փրկության համար,,:

Եվ՝ ,,Եկեք ամուր մնանք Աստծուն սիրելու մեջ: Նրանց, ովքեր իրեն սիրում են, Տերը միշտ առանձնահատուկ ձևով աջակցելու է: Աստծո խոստումը մնում է, ըստ որի՝ նրանց փրկության համար, ովքեր սիրում են Աստծուն, ծառայելու են բոլոր երևույթները- անգամ՝ Կորոնա-ճգնաժամը,,:

,,Միայն արիություն,, ; -այսպես է ասում գլխավոր առաքյալ Շնայդերը- ամեն ինչ լավ կլինի,,:

Ժամերգություններ՝ չնայած Կորոնա-ճգնաժամին

Եթե հավատացյալները չեն կարողանում այցելել ժամերգությունների, ապա ժամերգությունը կգա հավատացյալների մոտ: Այսպես է հոգ տանում նորառաքելական եկեղեցին իր անդամների համար Կորոնա-ճգնաժամի պայմաններում: Սակայն, հնարավորություններն ամբողջ աշխարհում շատ տարբեր են:

Հիմնական պլանում մնում է մեծ հավաքույթների անցկացման պաշտոնական արգելքը, նաև անվտանգության կամավոր միջոցառումների ձեռնարկումը: Ամենուր խոսքը նրա մասին է, որ մարդկանց պաշտպանելու նպատակով մարդկային շփումների թիվը կրճատվի: Այսպես կարելի է Կորոնայի վարակի տարածումը նվազեցնել և պակասեցնել բժշկական ծառայության գերծանրաբեռնվածությունը:

Գերմանական չորս շրջանային եկեղեցիներ ստեղծել են իրենց YouTube-յան ալիքները, որպեսզի ձևավորեն իրենց ռեսուրսները ժամերգությունների հեռարձակման համար: Հարավային Ամերիկան իր տրամադրության տակ ունի հեռարձակման իր սեփական պորտալը: Հարավային Աֆրիկայում կարող են օգտագործել անգամ սեփական ,,NAC TV“ հեռուստատեսության ալիքը, որը նաև չորեքշաբթի օրվա ժամերգություններն է ներկայացնում: Հյուսիսային Ամերիկայում ևս ժամերգությունների համար արդեն ունեն սեփական ալիքը: Այսպես,Կանադան և ԱՄՆ ոչ միայն ընտրովի հեռարձակումներ են անում, այլ ունենում են բազմաթիվ ձայնագրություններ ամբողջ շաբաթվա համար:

Բոլորովին այլ ուղիով է գնում Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության Հարավ-Արևելքի շրջանային եկեղեցին: Այստեղ ևս ստեղծել են սեփական YouTube-յան ալիքը: Սակայն, 1,8 միլիոն հավատացյալ քույր-եղբայրներ ունեցող հայանքների մեծ մասը չունի համապատասխան ինտերնետային ցանց: Իրավական պահանջների կատարման շրջանակներում սպասավոր եղբայրները տնից տուն են գնում, կարճ աղոթք են անում և տոնում են Սուրբ հաղորդությունը: Քանի որ համայնքները մեծ են, նրանք գնում են ոչ միայն կիրակի օրերին, այլ ամբողջ շաբաթվա ընթացքում նրանք ստիպված ճանապարհին են լինում,- գրում է շրջանային առաքյալ Չիչի Չիսեքեդին: Նա այս աշխատանքը լիարժեք կատարելու նպատակով ներգրավել է նաև հանգստի անցած մի քանի սպասավոր եղբայրների:

New Apostolic Church
International